ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«--» նոյեմբերի 2015թ. **N---- –Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 18-Ի N305-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 3-րդ և 5-րդ մասերով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի մարտի 18-ի «Երևանի վարչական շրջանների ղեկավարներին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների անհատական կազմերը հաստատելու և Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի նոյեմբերի 26-ի N161-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N305-Ա որոշման (այսուհետև՝ Որոշում) 1-ին կետով հաստատված N6 հավելվածը լրացնել նոր պարբերությամբ հետևյալ բովանդակությամբ՝

«Շահինյան Լիդա - Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի իրավաբանական բաժնի առաջատար մասնագետ»:

2. Որոշման 1-ին կետով հաստատված N11 հավելվածի «Ռուզաննա Մարգարյան» բառերը փոխարինել «Լուսինե Գրիգորյան» բառերով, իսկ «իրավաբանական բաժնի պետ» բառերը՝ «իրավաբանական բաժնի 1-ին կարգի մասնագետ» բառերով:

3. Որոշման 1-ին կետով հաստատված N12 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
2015 թվականի նոյեմբերի -- -ի
N ----Ա որոշման

«Հավելված N12
Երևան քաղաքի ավագանու 2015
թվականի մարտի 18
N305-Ա որոշման

Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի անհատական կազմը

Հանձնաժողովի նախագահ

Արտակ Հանիսյան	Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ղեկավար

Հանձնաժողովի քարտուղար

Անուշ Սարգսյան	Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի սոցիալական ապահովության, առողջապահության և ծրագրերի բաժնի գլխավոր մասնագետ

Հանձնաժողովի անդամներ

Արտաշես Մանուկյան	Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի քարտուղար
Ավետիս Շահումյան	Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի սոցիալական ապահովության, առողջապահության և ծրագրերի բաժնի պետ
Ակուլյա Հակոբյան	Երևանի թիվ 151 մանկապարտեզ ՀՈԱԿ տնօրեն»:

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 18-Ի N 305-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի մարտի 18-ի «Երևանի վարչական շրջանների ղեկավարներին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների անհատական կազմերը հաստատելու և Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի նոյեմբերի 26-ի N161-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N305-Ա որոշմամբ հաստատվել են խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների անհատական կազմերը։

Երևան քաղաքի ավագանու վերը նշված որոշմամբ հաստատված Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարին կից հանձնաժողովի անհատական կազմում լրացումը պայմանավորված է հանձնաժողովի աշխատանքների ծավալով։ Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի աշխատակազմի ղեկավարին կից հանձնաժողովի անհատական կազմում փոփոխությունների կատարումը պայմանավորված է հանձնաժողովի նախագահ և անդամներ հանդիսացող աշխատակիցների զբաղեցրած պաշտոնից ազատվելու, հանձնաժողովում ընդգրկվածության և գործունեության լիարժեքությունն ապահովելու, ինչպես նաև՝ նշված հանձնաժողովի աշխատանքներն ավելի արդյունավետ կազմակերպելու և իրականացնելու հանգամանքներով, իսկ Շենգավիթ վարչական շրջանի աշխատակազմի ղեկավարին կից հանձնաժողովի անհատական կազմում փոփոխություն կատարելու անհրաժեշտությունը պայմանավորված է հանձնաժողովի անդամ Ռուզաննա Մարգարյանի զբաղեցված պաշտոնից ազատվելու հանգամանքով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 18-Ի N305-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի մարտի 18-ի N305-Ա որոշման մեջ լրացում և փոփոխություններ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման կամ փոփոխման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 18-Ի N305-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի մարտի 18-ի N305-Ա որոշման մեջ լրացում և փոփոխություններ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևան քաղաքի բյուջեի եկամուտներում և ծախսերում էական ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ